

ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

## ՆՈՐԱՆԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՅՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 27-ԱՄՅԱԿԸ



27 տարի առաջ, 1995 թվականի օգոստոսի 24-ին, Վրաստանի այն ժամանակվա Պերագոյն խորհուրդը հավանություն տվեց նորանկախ Վրաստանի ժողովրդավարության հաստատմանն ուղղված սահմանադրության նոր խմբագրմանը:

Անցած 27 տարիների ընթացքում, երկիրը համաշխարհային գլոբալ փոփոխությունների պայմաններում անցավ նորանկախ պետությունների բնորոշ հաստատման որոշակի ուղի, եւ պատահական չէր, որ փոփոխվող իրավիճակին համապատասխան, որոշակի փոփոխություններ էին կատարվում նաեւ հիմնական օրենքում: Հատկանշական են «Վրացական երազանք» կուսակցության նախաձեռնությամբ 2018 թվականին իրականացված փոփոխությունները, որոնք երկրի գլխավոր փաստաթղթում է՛լ ավելի ընդգծեցին ժողովրդավարության եւ եվրոպական արժեքներին հավատարմության գաղափարները:

Այսօրվա դրությամբ, Վրաստանն ունի կայուն ժողովրդավարական (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

### ԷԿՈՆՈՄԻԿԱ

## ԼԵՎԱՆ ԴԱՎԻԹԱՆՎԻԻ. «ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԱՃՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՆՔՆԱԾ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԵՆ»

Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին, անդրադառնալով Վրաստանում զբոսայգիների տնտեսական աճի երկնիչ ցուցանիշի թեմային, հայտարարեց, որ դա առաջին հերթին կապված է արտահանման աճի ու զբոսաշրջության վերականգնման հետ:



- Մենք այսօր խոսում էինք Վրաստանում տնտեսական աճ ապահովող երկու կարեւոր գործոնների մասին: Դա առաջին հերթին արտահանման ավելացումն է, ներդրումներն ու վերականգնված զբոսաշրջությունը: Սրանք այն երկու գործոններն էին, որոնք տարեկան զբոսաշրջության տնտեսական աճի հետագա ընթացքը, թե որքանով է շահավետ միտումը, որքանով կշարունակվի մեր ունեցած միտումը: Մենք շատ բարձր աճ ենք ունեցել 2021թ.,

դեռ ունենք երկնիչ տնտեսական աճ՝ 10 տոկոսից բարձր: Ներկա տվյալների պահպանումը բավական մեծ մարտահրավեր էր, բայց անհրաժեշտ խնդիր, որին ձգտում է կառավարությունը: Այն պայմաններում, որ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

### ԴԻՔՈՐՈՇՈՒՄ

## ԻՐԱԿԻ ԿՈՐԱՄԻՏԵ. «ԵՐԿՐՈՒՄ ԿՊԱՅՊԱՆԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵՐԿՆԻՇ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ»



«Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Իրակլի Կոմիտաշվիլին հայտարարեց, որ իրենց գլխավոր ջանքերն ուղղված են երկրում խաղաղության եւ տնտեսական երկնիչ աճի պահպանմանը, իսկ արմատական ընդդիմության գլխավոր հոգսն այն է, թե ինչպես երկրում իրարանցում առաջացնի:

- Խոսում են հեղափոխական սցենարների մասին: Հավանաբար, հիշում եք Ջուրաբ Ջափարիձեի, Պետրե Ցիսկարիշվիլու հայտարարությունները: Միակը, որն անհանգստացնում է արմատական ընդդիմությանը, ցանկացած առիթ բաց չթողնելն ու երկրում իրարանցման առաջացումն է: Նրանց միակ նպատակը Ուկրաինայում ընթացող պատերազմում, ցավոք, մեր երկրի ներքաշումն է: Եվ սակայն, կրկին հիասթափեցնեմ նրանց՝ ասելով, որ դրա համար նրանք համապատասխան ռեսուրսներ չունեն: Իշխանությունը զբաղեցրել է հստակ դիրքորոշում, եւ ամեն ինչ կարվի, որպեսզի երկրում պահպանվի խաղաղությունն ու տնտեսական երկնիչ աճը,- հայտարարեց Իրակլի Կոմիտաշվիլին:

### ՏԱՐԵՐ

## ԱՐՏԱՍՈՎՈՐ ՏԱՊԸ ԿՊԱՅՊԱՆՎԻ ՄԻՆՉԵՎ ՕԳՈՍՏՈՍԻ ՎԵՐՋ

Մինչեւ օգոստոսի վերջ սպասվում է ուժեղ տապ եւ առանց տեղումների եղանակ: Այս մասին տեղեկացրել է բնապահպանության ազգային գործակալության օդերևութաբանական կանխագծումների վարչության պետ Սվետլանա Նիորաձեն:



- Մինչեւ օգոստոսի վերջը Արեւմտյան Վրաստանում ջերմաստիճանը կտատանվի 34-39 աստիճանի սահմաններում, իսկ Արեւելյան Վրաստանում՝ 32-36 աստիճան: Թբիլիսիում կպահպանվի առանց տեղումների եղանակ, իսկ ջերմաստիճանը կտատանվի 33-36 աստիճանի շրջանակներում: Երկրի առանձին շրջաններում հնարավոր են

կարճատեւ անձրեւներ, թեւ մինչեւ օգոստոսի վերջ երկրի ողջ տարածքում ուժեղ շոգեքոլ կպահպանվեն,- հայտարարեց Սվետլանա Նիորաձեն: Փորձագետների գնահատմամբ, ընթացիկ տարվա օգոստոսին ջերմությունը 1-2°-ով գերազանցում է նորման, իսկ տեղումները նորմայից ցածր են: (Խորագրի շարունակությունը՝ 4-րդ էջում)

### ՀԱՅԱՍՏԱՆ

## 32 ՏԱՐԻ՝ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Օգոստոսի 23-ին Հայաստանը նշեց Անկախության հռչակագրի 32-ամյակը:

1990 թվականի օգոստոսի 23-ին, Խորհրդային Միության նախկին հանրապետությունների կազմից Հայաստանն առաջիններից մեկն էր, որ ընդունեց անկախ պետականության հաստատումը վավերացնող հռչակագիր: Հայաստանի այն ժամանակվա Պերագոյն խորհրդի կողմից Անկախության հռչակագրի ընդունումն անկախ պետություն ունենալու հայ ժողովրդի անկապտելի կամքի ու սերնդեսերունդ փոխանցած երազանքի արտահայտությունն էր:



Իր շնորհավորական ուղերձում Վահագն Խաչատրյանը նշում է, որ Անկախության հռչակագրի այս բովանդակությունը մշտապես արդիական է, քանի որ արտահայտում է մեր՝ որպես պետականության եւ որպես հանրության հավաքական նպատակներն ու իղծերը:

Անկախության հռչակագրի տարեդարձի առիթով շնորհավորական ուղերձներով երկրի բնակիչներին շնորհավորեցին Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

### ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

## ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԸ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրյանի հրամանագրով, 53-ամյա Աշոտ Սմբատյանը նշանակվել է Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Թբիլիսի):



Աշոտ Սմբատյանը 1985-1997 թվականներին սովորել է ավարտել է Երեւանի պետական լեզվաբանական, Դերեզենի տեխնիկական համալսարանի, Լայպցիգի եւ Բեռլինի համալսարանների մաթեմատիկայի ֆակուլտետները: 1997 թվականից սկսել է աշխատել Հայաստանի արտաքին գործերի (ԱԳ) նախարարության համակարգում, եղել է Հայաստանի ԱԳ նախարարության Եվրոպայի վարչության առաջին քարտուղար, ապա՝ որպես դեսպանության խորհրդական, փոխդեսպան, իսկ 2015 թվականից՝ որպես Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան աշխատել է Գերմանիայում:

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրյանի մեկ այլ հրամանագրով, դիվանագիտական ժամկետի լրանալու կապակցությամբ, Ռուբեն Սարգսյանը ետ է կանչվել Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից:

Ռուբեն Սարգսյանը 2017 թվականի հոկտեմբերի 31-ից Վրաստանում Հայաստանի դեսպանն էր:

### ԴԻՔՈՐՈՇՈՒՄ

## ՇԱԼՎԱ ԴԱՎԻԹԱՆՎԻԻ. «ՆԱԽԱԳԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՄՈՒՄ Է ԱՐՄԱՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՈՒԹՅԱՆԸ» ԿԸՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԵՎ ԱՆԴԱՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ԲԱՅ ՄՐՅՈՒՅԸ

ԿԸՅ-ի անդամի ընտրության համար երկրորդ անգամ հայտարարված մրցույթին մասնակցելու երեք դիմում է ներկայացվել: Թեկնածուների ցուցակը հրապարակել է նախագահի աշխատակազմը: Ցուցակում նշված են Դավիթ Փետրիաշվիլու, Գիորգի Մասագիշվիլու եւ Նաթիա Ծապտաուրու ազգանունները:

Հիշեցնենք, որ նախագահը խորհրդարանին է ներկայացրել ԿԸՀ նախագահի եւ հանձնաժո-

ղովի մեկ անդամի թեկնածուներին: ԿԸՀ նախագահի ընտրության (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՆՈՐԱՆԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՅՑ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 27-ԱՄՅԱԿԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

զարգացման համար եվրոպական չափորոշիչներին համապատասխանող Սահմանադրություն:

Սահմանադրության օրվա առիթով Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին իր շնորհավորական ուղերձում նշեց, որ՝ անասան հավա-

տարմությունն ու գերագույն օրենքի պաշտպանությունը կարելի էր պայմանավորված քաղաքացիական միասնության, խաղաղության, բարգաձման, կայունության եւ երկրի առաջընթացի համար:

- Շնորհավորում եմ Սահմանադրության օրվա կապակցությամբ: 1995 թվականի օգոստոսի 24-ին Վրաստանի

խորհրդարանն ընդունեց երկրի ամենակարեւոր պետական փաստաթուղթը՝ Վրաստանի Սահմանադրությունը: Այն արտացոլում է հասարակության համաձայնությունը հիմնարար արժեքների, մարդկանց ընդհանուր նպատակների եւ ձգտումների վերաբերյալ, հաստատում է պաշտպանում է օրենքի գերակայությունը, յու-

րաքանչյուր անձի իրավունքներն ու ազատությունները, որոշում է քաղաքական, տնտեսական, սոցիալական կյանքի ուղղությունները: Սահմանադրությունը վրաց ժողովրդի հիմնական հենասյունն է եվրոպական պետության կառուցման գործընթացում, հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:



ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԵԼ ԵՆ ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ ՌԵԿՈՂԱՅԻՆ ՉԵՐ

Եվրամիության երկրների շուկայում էլեկտրաէներգիայի արժեքը կրկին գրանցել է պատմական առավելագույնը:

Մասնավորապես, Արեւելյան եւ Արեւմտյան Դանիայում գինը հասել է 563,81 եվրոյի մեկ մեգավատ-ժամի դիմաց, Ավստրիայում՝ 564,66, Բելգիայում՝ 561,94, Գերմանիայում՝ 563,81, Ֆրանսիայում՝ 571,34 եվրոյի եւ Նիդերլանդներում՝ 558,23 եվրոյի: Էլեկտրաէներգիայի արժեքը բարձրանում է գազի գնի թանկացումից անմիջապես հետո: Եվրոպայում գազի գինը սակարկությունների ընթացքում 2022 թվականի մարտի սկզբից ի վեր առաջին անգամ գերազանցել է 2 800 դոլարը հազար խորանարդ մետրի դիմաց:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ ԱՅՑԵԳՐԵՐ ԶԵՆ ՏՐԿԻ

Եվրամիության 27 երկրներում ակտիվ քննարկումներ են տարվում Ռուսաստանի քաղաքացիներին այցեգրերի տրման հարցի շուրջ: Նման առաջարկությամբ հանդես են եկել Էստոնիան եւ Ֆինլանդիան, թեեւ Եվրամիության երկրների մեծամասնությունը, մասնավորապես, Գերմանիան, Գոլանդիան, Պորտուգալիան, Իսպանիան եւ մյուսները հանդես են գալիս դրա դեմ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ Ո՞Վ Է ԿԱՆԳԱԾ ԴԱՐՅԱ ԴՈՒԳԻՆԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՏԵՎՈՒՄ

Օգոստոսի 20-ին մերձնոսկովյան Բոլշիե Վյազեմի գյուղի մոտ Land Cruiser Prado մեքենայի պայթյունի զոհ դարձավ ռուսաստանցի հասարակական գործիչ, փիլիսոփա, «Միջազգային եվրասիական շարժում» հասարակական կազմակերպության ղեկավար Ալեքսանդր Դուգինի դուստր, լրագրողուհի, 29-ամյա Դարյա Դուգինան:

Ռուսական կողմը սպանության գործում մեղադրում է Ուկրաինայի հատուկ ծառայություններին՝ նշելով, որ պայթյունը իրականացրել է Ուկրաինայի 43-ամյա քաղաքացի Նատալյա Վովկը, որը հետո փախել է Էստոնիա: Ուկրաինական կողմի հավաստմամբ, Կիևը Դուգինայի սպանության հետ որեւէ առնչություն չունի: Քիչ անց, Դարյա Դուգինայի սպանության պատասխանատվությունը սանձնեց Ռուսաստանում, ընդհատակում գործող ռուս պարտիզանների «Ազգային հանրապետական բանակը»:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԼԵՎԱՆ ԴԱՎԻԹՅԱՆԻ «ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԱՃՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՆԳԵՎԱԾ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԵՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

այսօր ունենք՝ պայմանավորված տարածաշրջանում ստեղծված իրավիճակով, աճող գնաճային ճնշումներով, ինչը, բնականաբար, բարդացնում է կառավարության որոշումները, պետք է հավասարակշռել տնտեսական աճը, որպեսզի շատ բարձր գնաճ չունենանք եւ գնաճը աստիճանաբար նվազեցնենք,- հայտարարեց Լեւան Դավիթյանը: Ինչպե՞ս, որ դա իրականացվում է մի կողմից կառավարության, մյուս կողմից՝ Ազգային բանկի քայլերին համապատասխան:

- Գիտեք, որ արտահանումն աճել է ավելի քան 60 տոկոսով, սա կարելու որոշիչ գործոններից է: Առաջին երկու եռամսյակների տվյալներով, օտարերկր-

յա ուղղակի ներդրումները բավական բարձր են: Առաջին եռամսյակի տվյալներով, օտարերկրյա ուղղակի ներդրումները չորս անգամ ավելի են եղել եւ գերազանցել են կես միլիարդ դոլարը: Այստեղ էլ նշեմ, որ հիմնական երկրները եղել են Եվրամիության, մեր տարածաշրջանի երկրները, ԱՄՆ-ը, Թուրքիան եւ այլն: Սա իրականացվել է օտարերկրյա ներդրումներով, ինչը բավական դիվերսիֆիկացված է, ամուր եւ թույլ է տալիս կանխատեսել կայուն տնտեսական աճը,- նշեց փոխվարչապետը:

Նրա խոսքով, տնտեսական աճի վրա դրական ազդեցություն գործեց նաեւ վերականգնված զբոսաշրջությունը:

- Ցավոք, մենք չկարողացանք լիովին վերականգնվել ավանդական զբոսաշր-

ջային շուկաներից, որոնց թվում հաճախ խոսում ենք Ռուսաստանի մասին: Եթե համեմատենք 2019 թվականի տվյալները, ակնհայտ երևում է, որ Ռուսաստանից զբոսաշրջիկների հոսքը նվազել է. Ուստի ընկալումները իրականությամբ չեն համապատասխանում: Հայաստանից, Ադրբեջանից եւ հարեւան այլ երկրներից երկիր եկող զբոսաշրջիկների թիվը նույնիսկ մոտ չէ 2019 թվականի տվյալներին: Մինչդեռ մի շարք նոր ուղղություններից բարձր գնողուճակ զբոսաշրջիկներ ենք ընդունել, եւ նախարարությունը շարունակում է աշխատել այս ուղղությամբ: Այնպես որ, սրանք կարելու որոշիչ գործոններ են, որոնք այսօր ապահովում են տնտեսական աճ,- ասաց Լեւան Դավիթյանը:

ԴԻՔՈՐՈՇՈՒՄ

ՇԱԼՎԱ ԴԱՊՈՒԿԵՎԻԻ. «ՆԱԽԱԳԱՐՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՄՈՒՄ Է ԱՐՄԱՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՄՈՒԹՅԱՆԸ»

ԿԸՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԵԿ ԱՆԴԱՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ԲԱՅ ՄՐՅՈՒՅՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



թյան համար խորհրդարանին է ներկայացվել Թամար Ալիբաիձեի եւ Ռեւազ Էգաձեի թեկնածությունները: Իսկ հանձնաժողովի անդամի ընտրության համար ներկայացվել է Քրիստինե Քաջախայի եւ Լեւան Իսակաձեի թեկնածությունը:

Հատկանշական է, որ Սալոմե Ջուրաբիշվիլին նորանկախ Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ խորհրդարանի հաստատման համար չի ներկայացրել ԿԸՀ գործող նախագահ Գիորգի Կալանդադիանի թեկնածությունը:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Դավիթյանը, մեկնաբանելով Սալոմե Ջուրաբիշվիլու՝ ԿԸՀ-ի նախագահի պաշտոնում գործող նախագահի թեկնածությունը չներկայացնելու վերաբերյալ որոշումը, հայտարարեց, որ դա քաղաքական որոշում է եւ խրախուսում է արմատական ընդդիմությանը: Ինչպես նշեց խորհրդարանի նախագահը, Կալան-

դարիշվիլին որակավորված, անկողմնակալ հանրային պաշտոնյա է, եւ նրա թեկնածության չնեղակայացնելը ընդդիմության ցանկությունն էր: Ըստ Շալվա Դավիթյանի, այդ որոշումը ուղղված է բարեխիղճ եւ արհեստավարժ հանրային պաշտոնյայի վարկաբեկմանը:

- Ցավալի է, որ առանց հիմնարար պարզաբանումների, գործող նախագահի թեկնածությունը չի ներկայացվել: Այդ որոշումը քաղաքական է, ինչը պայմանավորված է նրանով, իբր Կալանդադիանի երկու անգամ չի կարողացել հավաքել որակավորված մեծամասնություն: Իմ կարծիքով, այդ որոշումը արմատական ընդդիմության խրախուսումն է: Մենք միշտ խոսել ենք այդ մասին, եւ հիմա էլ կրկնում են, որ որակյալ մեծամասնությունը թերի համակարգ է, եւ որակյալ մեծամասնությունը, վերջին հաշվով, խրախուսում է արմատական ընդդիմությանը,- հայտարարեց Շալվա Դավիթյանը:



ՌՈՒՄ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. 184-ՐԴ ՕՐ

ՈՒԿՐԱԻՆԱՆ ՆՇԵՑ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Օգոստոսի 24-ին Ուկրաինան նշեց իր անկախության օրը: Տոնի առիթով հանրապետության քաղաքացիներին իր շնորհավորական տեսաուղերձն ուղղեց Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին:

Անկախության օրվա առթիվ Կիևում կազմակերպվեց ջախջախված ռուսական զրահատեխնիկայի ցուցադրումը:

Ուկրաինացիներին իրենց շնորհավորանքները հղեցին Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, աշխատի այլ պետությունների ղեկավարներ:

ՎԱՐԿԻՄԻՐ ԶԵԼԵՆՍԿԻ. «ՄԵՆՔ ԿՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ ԴՐԻՄ»

- Կվերադաճանք Դրիմ,- հայտարարել է Ուկրաինայի նախագահը «Դրիմի հարթակում» ունեցած ելույթի ժամանակ: Նրա խոսքով, Ռուսաստանի կողմից բռնակցված Դրիմն անպայման կվերադառնա Ուկրաինային եւ կառավարությունը կողողի այն ամենը, ինչ արել է Ռուսաստանը թերակղզում եւ ընդհանրապես սեւեռվային տարածաշրջանում:

- Ամեն ինչ սկսվել է Դրիմում եւ կավարտվի Դրիմում,- ասել է Ուկրաինայի նախագահը:

ՄԱԿ-Ի 58 ԵՐԿՐՆԵՐ, ԱՅՐ ԹՎՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ, ԴԱՏԱԴՈՐՏԵՑԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Օգոստոսի 25-ին ՄԱԿ-ի 58 անդամ երկրներ, այդ թվում՝ Վրաստանը, միացան հայտարարությանը, որում հերթական անգամ դատապարտում են Ռուսաստանի ագրեսիան Ուկրաինայում պատերազմի սկսվելուց վեց ամիս անց:

Փաստաթուղթը ստորագրել են Եվրամիության անդամ երկրները, ինչպես նաեւ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Շվեյցարիան, Թուրքիան, Կանադան, Մոլդովան եւ Վրաստանը:

ՄԱԿ. ՓԵՏՐՎԱՐԻ 24-ԻՑ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԶՈՂՎԵԼ Է 5 614 ԽԱՂԱՂ ԲՆԱԿԻՉ, ԱՅՐ ԹՎՈՒՄ 363 ԵՐԵՆԱԿ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերով տեղակալ Ռոզմարի Դի Կարլոնը հայտարարեց, որ փետրվարի 24-ից Ուկրաինայում 5 614 խաղաղ բնակիչ է զոհվել, այդ թվում՝ 363 երեխա: Տուժել է 7 946 մարդ: Նրա խոսքով, ՄԱԿ-ը մտահոգված է երկու կողմերի ռազմագերիների վիճակով: «Բոլոր ռազմագերիները գտնվում են մի-

ջազգային մարդասիրական իրավունքի պաշտպանության ներքո,- հայտարարեց Դի Կարլոն:

ՎՐԱՍՏԱՆԻՑ ՈՒԿՐԱԻՆԱ ԱՐՏԱՅԱՆՈՒՄԸ ՀԱՍԵԼ Է ՌԵԿՈՂԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ

Վրաստանի վիճակագրական պետական ծառայության տվյալներով, ընթացիկ տարվա հուլիսին Վրաստանից Ուկրաինա է արտահանվել 43,95 միլիոն ԱՄՆ դոլարի արժեքով, ինչը գրեթե երկու անգամ գերազանցում է նախորդ ամսվա (22,37 մլն դոլար) եւ 95 տոկոսով՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակամիջոցի ցուցանիշը:

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱԳԾՈՒՄՆԵՐԸ

Պատերազմի ուսումնասիրությունների ամերիկյան ինստիտուտի տեղեկության համաձայն, ռուսները առաջիկա ամիսներին հավանական է, որ զգալի տարածքներ կգրավեն: Փորձագետների կարծիքով, Ուկրաինայի արեւելքում ռուսական բանակի հարձակոճական գործողությունը կորցրել է թափը: Ինստիտուտի ներկայացուցիչները նշում են, որ Ռուսաստանի գլխավոր խնդիրն այն է, որ ռուսական բանակը չի կարողանում մարտավարական ձեռքբերումները օպերատիվ հաջողության վերածել:

Էջը պատրաստեց ՄԻՄՈՆ ԿԻԼԱԶԵՆ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԱՅՐԱՔԱՐԱՔ

ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԵՆ «ԵՐԵՎԱՆՅԱՆ» ԵՎ «ՄԻՄԻՆՈ» ՊՈՒՐԱԿՆԵՐԻ, «ՀԱՎԼԱԲԱՐԻ» ՄԵՏՐՈԿԱՅԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



Կախա Կալաձեի խոսքով, իրականացվող աշխատանքների արդյունքում կամրացվեն վայրում գտնվող կառույցները, կկարգավորվեն ջրահեռացման համակարգերը եւ այլն: Քաղաքապետը նշել է, որ կպահպանվի մետրոկայարանի արտաքին ճակատի կանաչ պատը: - Ներկայումս Թբիլիսիի բոլոր թաղամասերում ենթակառույցային աշխատանքներ են իրականացվում, ինչի պատճառով

ինչպես արդեն հաղորդել ենք, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հայտարարել է, որ այլ ենթակառույցային նախագծերի շրջանակներում քաղաքապետարանը սկսել է Հավլաբարի «Երեւանյան» եւ «Միմինո» պուրակների, ինչպես նաեւ մետրոպոլիտենի «Հավլաբարի» կայարանի վերին գավիթի վերանորոգումը:

ճանապարհների մի մասը արգելափակված է: Ուստի ներողություն ենք խնդրում բնակիչներից,- ասել է Կախա Կալաձեն:

Քաղաքապետը նշել է նաեւ, որ ընտանեկան կարգի դատարարական տների 18-ից մինչեւ 21 տարեկան նախկին սաները Թբիլիսիի քաղաքապետարանից կստանան ժամանակավոր բնակարաններ:

- Բացի այդ, քաղաքապետարանը նրանց կօգնի զարգացնել մասնագիտական հմտություններն ու հաղորդակցման ունակությունները, կցուցաբերվի նաեւ հոգեբանական աջակցություն,- հայտարարեց Կախա Կալաձեն:

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ԻՐԱՎԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ԱՅՑԵԼԵԼ Է ԻԼԻԱ ԵՎՐՈՊՐԻՆ



Օգոստոսի 22-ին Կրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին այցելել է Համայն Կրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդին:

- Այսօր հանդիպեցի Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբությանը՝ Իլիա Երկրորդին: Մեծ պատիվ է եւ միշտ հաճելի տեսնել Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբությանը: Նրա հետ չափազանց հետաքրքիր է զրուցել երկրում իրավիճակի եւ տարածաշրջանում ու աշխարհում ընթացող գործընթացների մասին:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍԱՆԻՑ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱՆԱՆՈՒՄ ԱՎԵԼԱՅԵԼ Է 2-4 ԱՆԳԱՄ

Կրաստանում մարդատար ավտոմեքենաների վերարտահանումը կրկին աճել է: Փորձագետների զննահատմամբ, ընթացիկ տարվա հուլիսին, անցյալ տարվա համապատասխան ժամանակամիջոցի համեմատ, այն ավելացել է 2-4 անգամ:

Եթե 2021 թվականի հուլիսին երկրից դուրս էր բերվել 42,9 միլիոն ԱՄՆ դոլարի 5946 միավոր ավտոմեքենա, ապա այս տարի երկրից դուրս է բերվել 101,4 միլիոն ԱՄՆ դոլարի 9172 միավոր մարդատար ավտոմեքենա: Ստորել ներկայացնում ենք «Բիզնես-սթատիստիկա»-ի այն 10 երկրների ցուցակը, ուր ընթացիկ տարվա հուլիսին Կրաստանից արտահանվել են մեքենաներ:

Այդ ցուցակում առաջինն Ադրբեջանն

է, ուր Կրաստանից արտահանվել է 30,3 միլիոն ԱՄՆ դոլարի 2652 միավոր ավտոմեքենա: Նույն ժամանակահատվածում Հայաստան է արտահանվել 23 միլիոն ԱՄՆ դոլարի 1449 միավոր ավտոմեքենա: 18 միլիոն ԱՄՆ դոլարի 2815 միավոր ավտոմեքենա է արտահանվել Ուկրաինա: Ռուսաստան է արտահանվել 8,2 միլիոն ԱՄՆ դոլարի 580 միավոր ավտոմեքենա:

Հատկանշական է, որ ընթացիկ տարվա սկզբից Կրաստանից վերարտահան-



վել է 370,8 միլիոն ԱՄՆ դոլարի ավտոմեքենա: Վերարտահանված մեքենաների ստացված եկամուտը կազմում է ընդհանուր ապրանքների արտահանման գումարի 12 տոկոսը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍԱՆԸ ՎԵՑԵՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ «ԱՐԺԱՆԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ» ԲԱԶՄԱԶԳ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Այս տարի առաջին անգամ «Արժանի գործընկեր» գորավարժությանը մասնակցեցին ճապոնիայի եւ Շվեդիայի զինված ուժերի ներկայացուցիչները:

Կրաստանում վեցերորդ անգամ անցկացվեց «Արժանի գործընկեր» բազմազգ գորավարժությունը, որի նպատակն է բարձրացնել Կրաստանի, ԱՄՆ-ի, տարածաշրջանային գործընկերների եւ դաշնակից երկրների միջև պատրաստվածությունն ու փոխհամագործակցությունը Սեւծովյան տարածաշրջանում կայուն եւ անվտանգ միջավայր ապահովելու նպատակով:

Բազմազգ գորավարժություններից ներգրավված է ավելի քան 2400 զինվորական: Կրաստանի պաշտպանության նախարարության տվյալներով, այս տարվա բազմազգ գորավարժությունների մասնակիցներն են Կրաստանը, ԱՄՆ-ը, Բուլղարիան, Ռումինիան, Մոլդովան, Հունաստանը, Մեծ Բրիտանիան, Թուրքիան, Սլովակիան, Նոր-

վեգիան, Հունգարիան, Լիտվան, Ադրբեջանը, Գերմանիան, Բուսնիա եւ Հերցեգովինան, Էստոնիան, Լեհաստանը, Ճապոնիան, Լիտվա-Լեհաստան-Ուկրաինայի բազմազգ բրիգադը եւ Շվեդիայի զինված ուժերը:

Զորավարժությունների ընթացքը ներկայացրել է ՊԲ Իրամանատար «Արժանի գործընկեր 2022»-ի ղեկավար, բրիգադային գեներալ Ռուլանդ Չճելաձեն:

ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆ «ՄԹԱՎԱՐԻ ԱՐԽԻ», «ՖՈՐՄՈՒԼԱ» ԵՎ «ԴԻՎԵԼԻ ԱՐԽԻ» ՀԵՌՈՒՍԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Կրաստանի երազանք» իշխող կուսակցության պահանջով, Հատկորդակցության հանձնաժողովը պատժամիջոցներ է կիրառել իշխանությանը քննադատող հեռուստաընկերությունների՝ «Սթավարի արխի», «Ֆորմուլայի» եւ «Պիրվելի արխի» նկատմամբ «Տուն դեպի Եվրոպա» տեսառվարակցի տեղադրելու պատճառով:

Քանի որ «Ֆորմուլան» ու «Պիրվելի արխին» վերջին մեկ տարում նման պատժամիջոցների չեն ենթարկվել՝ միայն նախագահությանը հանձնարվել է ճշգրտագույն ճշգրտագույն, իսկ ֆինանսական ճգնաժամի շրջան ապրող «Սթավարի արխին» տուգանվեց 118 հազար 689 լարիով:

ԹՈՂԱՐԿՎԵԼ Է «ԵՎՐՈՔԱՍԿԵՏ-2022» ՄԵՏԱՐԱԴՐԱՄ

Կրաստանի Ազգային բանկը սկսում է թողարկել Եվրոբասկետ 2022 մետաղադրամը:



Ազգային բանկի տվյալներով, մետաղադրամի դիզայնը ընտրվել է բաց մրցույթով: Հուշադրամը տպվել է Բաղեն-Վյուրտեմբերգի (Գերմանիա) պետական դրամահատարանում, 5000 տպաքանակով: Վաճառքի գինը 70 լարի է:

«Կրաստանի բասկետբոլը այս տարի նշում է իր 100-ամյակը: Եվրոբասկետ 2022-ի անցկացումը սպորտի այս տեսակը նոր մակարդակի է հասցնում:

COVID - 19

ԶԳՈՒՇԱՅԵՔ, ԿՈՎԻԴՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ ԴԵՊՔԵՐՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ ԵՆ

12 595 ՎԱՐԱԿՄԱՆ ԵՎ 6 ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ՝ ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ



Անցած շաբաթվա ընթացքում Կրաստանում գրանցվել է կորոնավիրուսով վարակման 12 595 նոր դեպք: Առողջացել է 12 329 բուժառու, 6-ը մահացել են: Այս մասին տեղեկությունը տարածել է Կրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը:

Մեկ շաբաթվա ընթացքում Կրաստանում 74 հազար 171 թեստավորում է կատարվել: 7-օրյա թեստավորման դրական ցուցանիշը կազմում է 16,98 տոկոս:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ոչ ինվազիվ օդափոխություն, կփոխ-

COVID-Ի ՆՈՐ ՍԱԿԱԳՆԵՐ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կրաստանի կառավարության օգոստոսի 22-ին ընդունած որոշմամբ, կլինիկաների համար սահմանվել են նոր COVID-սակագներ:

Մասնավորապես, թերապեւտիկ միջամտությունների ենթարկվող կորոնավիրուսով վարակված անձի բուժումը կփոխադրվի մինչեւ 950 լարիով (340 դոլար), իսկ եթե հիվանդին անհրաժեշտ լինի ինվազիվ եւ/կամ վաղաժամ ծառայություններ, կփոխ-

հատուցվի մինչեւ 4500 լարիով (1600 դոլար): Հրամանագրի համաձայն, սակագինը ներառում է հիվանդի բուժման եւ/կամ ախտորոշման հետ կապված ծախսերը՝ ներառյալ սնունդը, նաեւ բուժանձնակազմի աշխատավարձը, կոմունալ ծառայությունները եւ այլն:

ԱՐԺԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՆԻՏԱՁԵՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ

- Գիորգի Կվինիտաձեի անունը հավերժ կմնա Վրաստանի պատմության մեջ, այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:



Կառավարության ղեկավարի խոսքով, հայրենիքի ազատության համար նվիրյալ մարտիկ, վրացական արդի բանակի ստեղծողներից մեկը չի կորցրել իր հավատը երկրի անկախության վերականգնման հանդեպ ունյնիսկ իր տարագրության մեջ գտնվելու ամենածանր օրերին:

Դեմոկրատական Հանրապետության (1918-1920 թթ.) գլխավոր հրամանատար Գիորգի Կվինիտաձեի ծննդյան օրն է:

- Չկա փամփուռ, որը սպանի ինձ, քանի որ իմ արմատները սպանված, բայց չմահացած երկրում են,- Գիորգի Կվինիտաձեի այս խոսքերը մարմնավորում են Վրաստանի անմահության, նրա ազատության եւ պետական այրերի քաջության ու արիության գաղափարը:

Մեզ համար մեծ պատիվ է, որ անցյալ տարի մեզ հնարավորություն տրվեց, երկարատև բաժանումից հետո, Գիորգի Կվինիտաձեի աճյունը հայրենիք բերել:

Գիորգի Կվինիտաձեի անունը հավերժ կմնա Վրաստանի պատմության մեջ, մեզանից յուրաքանչյուրի, գալիք սերունդների հիշողության մեջ,- նշում է վարչապետը:

ՏԱՐԵՔ

ԲՈՐԺՈՄԻ. ԲԱՐՁՐ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ՝ ՀՐԴԵՀԻ ԲՈՆԿՄԱՆ ՆԱԽԱԴԴՅԱԼ

Օգոստոսի 20-ից Բորժոմի անտառներում անցկացվում են հրդեհաշիջման աշխատանքներ: Կիրճի բարդ տեղանքը, այրվող անտառների ծուխը արգելում են հրշեջների աշխատանքը:

Վրաստանի ներքին գործերի նախարարության տվյալներով, տարբեր բարդության օջախներ դեռևս գրանցվում են: Հրդեհաշիջման գործողության տարածքը բաժանված է երեք հատվածի, եւ երեք հատվածներում էլ ակտիվ տեղայնացման եւ լուծարման աշխատանքներ են իրականացվում:

Վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու հանձնարարությամբ, Բորժոմի մունիցիպալիտետում բռնկված հրդեհը հանգցնելու նպատակով, ներքին գործերի նախարարության, պաշտպանության նախարարության, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարության ու շրջակա միջավայրի պահպանության նախարարության համապատասխան ծառայությունների աշխատակիցները համակարգված կերպով իրականացնում են հրդեհաշիջման աշխատանքներ:



Այս պահին շուրջ 1200 մարդ ներգրավված է տարբեր աշխատանքներում: Հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցում են 300 հրշեջ եւ Հատուկ առաջադրանքների վարչության 300 աշխատակից:

ՎԱՆԹԱՆԳ ԳՈՄԵԼԱՌԻ. «ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԵՎ Ս ԱՌԱԶԱՐԿԵՅՑ ՄԵՉ ԻՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ...»



Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրին, ով Բորժոմի մունիցիպալիտետում անմիջականորեն ղեկավարում է հրդեհաշիջման աշխատանքները, հայտարարեց, որ հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավվել են թուրքական մասնագիտացված հրշեջ ինքնաթիռներ: Նա աջակցության համար շնորհակալություն հայտնեց թուրքական, արդեթանական եւ հայկական կողմին:

Թիո է ներգրավվել աշխատանքին, եւ ես ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր ընկերներին՝ թուրքական կողմին: Ուզում եմ ընդգծել արդեթանական կողմի առաջարկը, ուզում եմ շնորհակալություն հայտնել նրանց: Շնորհակալություն եմ հայտնում նաեւ հայկական կողմին, նրանք մեզ առաջարկեցին տեխնիկայով օգնել: Չմայած, որ համապատասխան տեխնիկան մոբիլիզացրել ենք, բայց այս պահին չի ստացվում մեծ ինտենսիվությամբ ու ֆիզիկապես աշխատել, տեղանքը թույլ չի տալիս: Դժբախտաբար, ինչպես եվրոպայում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում հրդեհներ են, հետեւաբար, մենք չենք ակնկալում, որ մոտ ապագայում այլ երկրից ինքնաթիռ կծանանի,- ասաց Վախթանգ Գոմելաուրին:

ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ՀՐԴԵՀԻ ԲՈՆԿՈՒՄԻՅ ԿԱՍ ԻՆՉԵՍ ԿԱՆԽԵԼ ԴՐԱ ՏԱՐԱՇՈՒՄԸ

Վրաստանի արտակարգ իրավիճակների (ՎԱԻ) կառավարման ծառայությունը հրապարակել է հաղորդագրություն, որտեղ զգուշացումներ են նշված, թե ինչպես խուսափել հրդեհի բռնկումից կամ ինչպես կանխել դրանց տարածումը:

Ըստ հաղորդագրության, առաջիկա օրերին Վրաստանում կպահպանվեն բարձր ջերմաստիճանն ու առանց տեղումների եղանակը, լեռնային շրջաններում, շոգից բացի, սպասվում են նաեւ ուժեղ քամիներ, որոնք նպաստող գործոններ կստեղծեն անտառային հրդեհների առաջացման համար:

Նման եղանակի պայմաններում, հրդեհների պատճառներից մեկը կարող է լինել աղբը՝ այն կարող է բարձր ջերմաստիճանի դեպքում բռնկվել եւ այրվել, ուստի քաղաքացիներին հորդորում են չաղտոտել շրջակա միջավայրը:

Մարդիկ հաճախ են հանգստի մեկնում, եւ անտառներում, ցավոք, աղբ թողնում, խարույկ վառում կամ չհանգցնում, կամ էլ ծխախոտը նետում խոտի վրա:

Վերատեսչությունն առանձնակի ընդգծում է, որ հարկավոր է հատկապես զգուշանալ ջրում ցուցաբերել Սամցխե-Ջավախեթի երկրամասում, քանի որ այնտեղ օդը մշտապես չոր է, ինչը հրդեհի համար բարենպաստ պայման է, եւ դրա ապացույցը Բորժոմի անտառների հրդեհն է:

Հարկավոր է ոչ մի դեպքում չանտեսել անգամ փոքրիկ ծուխը, հզոր քամիների պատճառով հրդեհը կարող է տարածվել:

Նշենք, որ ծուխ նկատելու կամ հրդեհի դեպքում, քաղաքացին պետք է անհապաղ տեղեկացնի ՆԳՆ հանրային անվտանգության կառավարման կենտրոն՝ 112:

ՏԱՐԱՇԱՆԵՐՁԱՆ

ՄԵԼՔՈՆ ՄԱԿԱՐՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԴԱՄԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Օգոստոսի 23-ին Ախալքալաքի մունիցիպալիտետի «Ապագայի տանը» անցկացվեց ամփոփիչ միջոցառում:



Ինչպես հայտնեցին Ախալքալաքի քաղաքապետարանից, «Ապագայի տան» 100 դպրոցականներ ավարտեցին վրացերեն, հայերեն, ռուսերեն, անգլերեն եւ ֆրանսերեն դասընթացները: Քննությունը հաջողությամբ հանձնել է 51 աշակերտ:

Միջոցառմանը աշակերտներին շնորհավորեցին եւ պատվոգրեր հանձնեցին Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, փոխքաղաքապետ Սկրտիչ Միդեյանը եւ «Ապագայի տան» տնօրեն Սաթեմիկ Մահտեսյանը:

ԲԱԹՈՒՄԻ-ՄԻՍԱԼՅԻՄԵ ՀԱՆԱԴԱՐՀԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՎԵՅՑ ԵՐԿԿՈՐՄ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի ավտոճանապարհների ղեկարտամենտի տեղեկատվությամբ, Բաթումի (Անգիսա)-Ախալցխե ավտոճանապարհի 125-րդ կմ-ում տրանսպորտային միջոցների երթելու կոլոններ կողմից էլ վերականգնվել է:

Հիշեցնենք, որ Խուլո-Չարգվի 2-րդ լոտի շինարարության շրջանակներում, հողի եւ ժայռաքեկորների իջնելու եւ ավտոճանապարհի վնասվելու վտանգի պատճառով, ժամանակավորապես նշված հատվածում արգելվել էր բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների երթելու կոլոնները: Ծանապարհահատվածին երթելու կոլոնը սահմանփակումներ էին գործում օգոստոսի 16-ի երեկոյից: Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՒՐԵՆՅԱՆԸ

ՄԱՌՆԵՈՒԼԻ ԲԱՐՁՐԱԼԵՌ ԱՂՔՅՈՐՓԻ, ԾՈՓ ԵՎ ՕՓՐԵԹ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԸՆԹԱՃՔԻ ՄԵՉ ԵՆ

Մառնեուլի մունիցիպալիտետի բարձրալեռ Աղբյուրի, Ծոփ եւ Օփրեթ գյուղերում ակտիվ ընթանում են ենթակառուցվածքային նախագծերը:

Ընթացքի մեջ են Ծոփ գյուղ տանող ճանապարհի վերականգնման աշխատանքները. ծրագրի արժեքը 264 հազար 352 լարի է: Ծանապարհաշինական աշխատանքները կավարտվեն այս տարվա օգոստոսին:



Օփրեթ գյուղում կառուցվում է բազմագործառույթ շենք, որը գյուղացիները կօգտագործեն մի շարք կարիքների համար:

Աղբյուրի գյուղում ակտիվ ընթանում են ներքին ճանապարհների շինարարական աշխատանքները:

Երեք գյուղերի ընդհանուր աշխատանքների համար հատկացվել է 950 հազար լարի. ծրագրերը ֆինանսավորվում են տեղական բյուջեից: Մառնեուլի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Ամիրան Գիրգաձեն Մառնեուլի մունիցիպալիտետի քաղաքապետ Քենան Օմարաբաժանյանի ղեկավարման տարածաշրջանում հրդեհների ղեկավարներ: